

# Ե Ր Ո Ւ Ա Ն Դ    Լ Ա Լ Ա Յ Ե Ա Ն

Երեւանում, կարճատեւ հիւանդութիւնից յետոյ, վախճանեց Երուանդ Լալայեանը:

Չկայ այլ եւս հայ ազգագրութեան ամենավաստակաւոր մարտիկը, կովկասահայ իրականութեան վերջին շրջանի ամենալաւ բանասէր-բանահասարակը:

Ո՛վ մտաւորից է ճանաչում Լալայեանին, ո՛վ գիտէ նրա կեանքը, ո՛վ ծանօթ է նրա աշխատանքի երկաթէ կամքին, նրա հնագիտական անխոնջ պեղումներին, բանասիրական յամառ հետազոտութիւնների աննկուն պայքարին, նա սրտի կսկիծով է համակոււմ այդ ազգագրագէտի մահուան գուժը լսելիս:

Աննկուն, յամառ աշխատանք, մանրակրկիտ հետախուզումներ, պրպտումներ, մոլեռանդ անձնուիրութիւն, — ահա այն բնորոշ եւ առանձնայատուկ գծերը, որ արտայայտոււմ էր Լալայեանն ազգագրական, հնագիտական աշխատանքների ասպարիզում: Այդպէս էլ մնաց նա մինչեւ իր մահը:

Շրջիլ յետամնաց, խուլ գիւղերը, գաւառները, մտնել ժողովրդի մէջ, հաւաքել նրա մէջ շրջող բանահիւսութեան գոհարները — հէքեթները, երգերը, հանելուկները, առածները, ասացուածքները, — արձանագրել նրա նահապետական կենցաղի բնորոշ, տիպիկ եւ առանձնայատուկ գծերը, փրկել անյայտացող տարադի մնացորդները, պոկել ժայռերի, բերդերի, գերեզմանաքարերի վրայից պատմական արձանագրութիւնները, հնագոյն գերեզմաններից դուրս բերել բոլոր այն նիւթերը, որոնք ամենատերտ կերպով կապուած են հայ եւ

հայրենա ժողովուրդների պատմութեան, կուլտուրայի, արուեստի, կենցաղի, աշխատանքի հետ:

Ահա Լալայեանի դրօշը:

Նա հայ ազգագրութեան վերջին շրջանի հմուտ ղեկավարն էր. խորապէս տիրապետում էր ազգագրութեան բարդ տեխնիկային, ունէր գիտական լուրջ պատրաստութիւն:

Ահա թէ ինչպէս նրա մահը զգալի է և ծանր: Ահա ինչու բացառիկ է այդ կորուստը:

Ազգագրական այն ուղին, որ անցել է Լալայեանն անվանող պայքարով ու սոսկոռութեամբ, ազգագրական այն մեծ արձանը, որ կերտել է ազգագրագէտի մուրճով, հոյակապ է, բազմբանդ, խոր եւ ուսանելի:

Կարելի է համարձակ նշել, որ նրա ամբողջ կեանքը, նրա անխոնջ, բեղմնաւոր ստեղծագործական աշխատանքը հիւսուած է Անդրկովկասի հայ ժողովրդի եւ մասամբ էլ թրքահայ ազգագրութեան վերջին շրջանի շարժման ամբողջ պատմութեան հետ, հայ հնագիտութեան, բանասիրութեան հետագայ շրջանի որոնումների, ձեւակերպումների, զարգացման եւ վերելքի ամբողջ պատմութեան հետ:

Այդ շարժման, պայքարի, ստեղծագործութեան կոթողներն են «Ազգագրական Հանդէս»ի 42 հատորները (1892—1917 թ.), որոնք ուրոյն տեղ են գրաւում հայ ազգագրութեան պատմութեան մէջ:

Այդ շարժման պատմութիւնն է 1905 թւին թիֆլիսում հիմնուած Ոգագրական Բնկերութիւնը», որ մի նոր շրջան բաց արեց



հայ ազգագրութեան պատմութեան համար: Շնորհիւ այդ Լեւոնութեան աւելի ընդարձակուեց հայ ազգագրութեան շրջանակը, աւելի նոր ձեւ, նոր գոյն եւ բովանդակութիւն ստացաւ հայ ազգագրութիւնը, եւ որ գլխաւորն է, ազգագրութիւնը դրուեց գիտական լուրջ հիմքերի վրայ:

Նոյնպէս Լալայեանի աննկուն ջանքերով է, որ թիֆլիսում Ազգագրական Լեւոնութեան կից հիմնուեց Ազգագրական Պատմական Թանգարանը:

Այդ շարժման արդիւնք են Հայ Ազգագրութեան հիմնադրութեան մարգարիտները, Վանայ ձեռագիրների լուրջ ուսումնասիրութիւնները:

Լալայեանի աշխատանքի, պայքարի դարձնեցում՝ ազգագրական-հնագիտական ինչպիսի կուլտուրա տեսն չի եղել — ազգագրագէտ, հնագէտ, բանահաւաք, դրամագէտ, ազգագիր-խմբագիր, ազգագրական թանգարանի հիմնադիր:

Ազգագրական աշխատանքների բոլոր մօտիւնները, տեսակները կարելի է հանգիստիկ նրա կեանքի ճանապարհին: Սակայն առանձին ուշադրութեան արժանի են նաև Լալայեանի հնագիտական աշխատանքները:

Հերոսական ջանքերով եւ պայքարով նա հնագիտական պեղումներ կատարեց Նոր-Բայազիդի, Էջմիածնի, Դարալագեազի, Կոտայքի եւ այլ գաւառներում: Բաւական է արձանագրել, որ նա պեղել է մօտ 1000 դամբան եւ փրկել կորստից նախասլաւական շրջանի կուլտուրային վերաբերող խիստ արժէքաւոր նիւթեր, որոնք նշանակութիւն ունին ոչ միայն հայ ժողովրդի այլ եւ Անգլոփոնիկ ժողովուրդների հին կուլտուրայի եւ պատմութեան համար:

Լալայեանի անխնայ աշխատանքի, պեղումների արդիւնք են յղկուած քարի, բրոնզէ եւ երկաթէ դարերի վերաբերեալ յայտնաբերած նիւթերը, որոնք ցայտուն գաղափար են տալիս մեզ հնագոյն շրջա-

նի հայ եւ հարեւան ժողովուրդների աշխատանքի գործիքների, տնային իրերի, զարդերի, զէնքերի, հաւատքի եւ այլ առանձնաշատուկ գծերի մասին:

Սակայն դրանով էլ չի սահմանափակում Լալայեանի ազգագրական գերը: Նա առանձին գուրգուրանքով հաւաքել է նաև հին գրամները, որոնք մեծ նշանակութիւն



ԵՐՈՒԱՆԴ ԼԱԼԱՅԵԱՆ

ունին տնտեսական պատմութեան, առեւտրական յարաբերութիւնների եւ ժամանակագրութեան համար: Այդ գրամների զարդերը, պատկերները ցայտուն գաղափար են տալիս հնագոյն ժամանակաշրջանի արուեստի, զգեստների եւ զէնքերի մասին:

Լալայեանի ուշադրութիւնից չեն վրիպել նաեւ տնայնագործական, ձեռագործական, նոյն իսկ երաժշտական արժէք ներկայացնող նիւթերը:

Սակայն նրա ազգագրական նիւթերի մէջ առանձնաշատուկ տեղ են բռնում հայկական տարագները: Առանձին սիրով հաւաքել է նա Վանի, Պիթլիոի, Կարինի,



Ախալքալաքի, Ախալցխայի, Թիֆլիսի եւ այլ գաւառների հայկական տարազները:

Այդ բազմերանգ, գունաւոր աշխատանքները նա ո՛չ միայն կերտել է, կառուցել, այլ և կարողացել է տալ իր հաւաքած նիւթերի գիտական վերլուծութիւնը: Եւ դա Լալայեանի բնորոշ գծերից մէկն է:

Նրա կերտած նիւթերը զարգարում են այսօր Երեւանի Պետական Թանգարանը:

Մտէք այդ թանգարանը, անցէք հնագիտական, ազգագրական, պատմա-գրական լրագրական եւ այլ բաժինները: Այնտեղ դուք կը տեսնէք Լալայեանի պրպտող, հաւաքող, կառուցող, կերտող ձեռքի նուաճումները:

Առհասարակ Լալայեանի հայ ազգագրութեան մատուցած ծառայութիւնը դժուար է հանդէսի սահմանափակ շըրջանակում արձանագրել: Դա ազգագրական մի ամբողջ պատմութիւն է: Դա ազգագրական գեղեցիկ մի սիմֆոնիա է, որի ներդաշնակ հնչիւնները խօսում են ձեր սրտի, հոգու, գգացումների հետ, որի

գունաւոր երանգները պատմում են ձեզ ոչ միայն հայ ժողովրդի, այլ և հարեւան ժողովուրդների հին եւ նոր կուլտուրայի, պատմութեան, արուեստի եւ տեխնիկայի մասին:

Այդ նիւթերը այժմէական եւ խոշոր նշանակութիւն ունին հայ և հարեւան ժողովուրդների պատմութեան եւ գրականութեան աղագայ ծանոթութեան համար: Այդտեղ էլ կայանում է Լալայեանի ազգագրական գործունէութեան մէկ ուրիշ բնորոշ ու կարեւոր արժանիքը:

Ձի կարելի այստեղ չյիշատակել նաեւ նրա հաւաքած հազարաւոր հէքեաթների, ժողովրդական երգերի, առածների, հանելուկների, ժողովրդական բարքերի, սովորութիւնների, նիստ ու կացի անտիպ նիւթերը, որոնց լաւագոյն, արժէքաւոր մասերը հրատարակուելու են Երեւանում Մեկոնեան Ֆոնդով:

Դա էլ կը լինի լաւագոյն արձանը նրա թարմ հողակոյտի վրայ:

Թիֆլիս

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

## Լ Ո Յ Ս Ը Կ Ը Հ Ա Ն Գ Չ Ի

Ան, մերիկի մը նման որ կը զրոհէ անտառներու կոյս ծոցին մէջ ու հաստաբուն ծառերն իր ուսին վրայ նետելով՝ կը խուժէ ծովերու և քաղաքներու վրայ, իբր անհամար անդգրու տարմ մը կը մտնէ ամբոխներու մէջ, կը խուճապէ զանոնք և անոնց յոյսերն ու երազներն իրենց հունէն հանելով՝ կը խեղդէ զանոնք իր մոլուցքին մէջ եւ կը խորասուզուի խաւարներու համայնակուլ նիրմանային մէջ:

Ան, մերթ, գիշերուան մը նման որ վերջալոյսի իր քնքշահայեաց ու մեծաթով նա-

զանքի ա՛յնքան դիւթական պատկերումին ներքեւ անթափանց մթութեան խորունկ զարհուրանքը կը թաքցնէ, — երփներանգ ու մեծագմայլ տեսարանի մը մէջ՝ կը ներկայանայ իբր տիեզերական գործիք ու գեղեցկութեան խտացեալ պայծառացում մը, եւ յափշտակելով մարդը կը նետէ իր քստմնելի մոռային մէջ, ուր, մարդ՝ ուրիշ բան չի տեսեր եթէ ոչ խաւարի պիւրկ ու ջղուտ բուն մը, որ կը պրկուի ու կը քակուի, կը հաւաքուի ու կ'երկարի, եւ մերթ, ուժգին թափով մը, ինքն իր վրայ ամփոփուելով՝ յանկարծ ա-